ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՍՎԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՇՈՒՐՋ

Տաթեւավանքից հարավ-արեւմուտք՝ Տաթեւ գետի վերին հոսանքի շրջանում, Արամազդ լեռան հյուսիսային փեշին է գտնվում Սվարանց կամ Սեւարանց գյուղը: Սյունիքի մարզի այս փոքրիկ գյուղն ունի արգավանդ հողեր եւ փարթամ արոտավայրեր: Գյուղում կանգուն է սրբատաշ քարերով 17-18-րդ դդ. կառուցված եռանավ բազիլիկ տիպի եկեղեցի[1], կան նաեւ խաչքարեր, տապանաքարեր: Ավելի հարավ՝ բարձրադիր վայրում, Ցուրաբերդն է:

Սվարանց գյուղը հիշատակված է «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ՝ որպես Տաթեւի վանքին պատկանող տարածք[2]: Գյուղի անունը նշված է նաեւ Ղեւոնդ Ալիշանի բերած մի քանի հին ցուցակներում[3]: Ալիշանը Սվարանցի անունը կապում է Ցուրավանք - Ցրվանք - Զորովանք - Ցրվանց վանքանունների հետ՝ նույնացնելով Սվարանցն ու Ցուրաբերդը. «Թերեւս նոյն է Ցրուանցդ ընդ Սուարանց՝ զոր տեսաք երկիցս յիշեալ ի ցուցակս հասից Տաթեւոյ ...»[4]:

Սակայն հետագա ուսումնասիրողները տարանջատում են այս երկու անունները կրող տարածքները: «Հնում հիշատակված եւ այժմ էլ գոյություն ունեցող Սվարանց գյուղի նույնացումը Ցուր-Ցուրաբերդի հետ հավանական չէ», - գրում է նշանավոր վիմագրագետ Ս. Բարխուդարյանը[5]: Սակայն վերջինս Ցուրաբերդի եկեղեցու եւ Սվարանց խաչի արձանագրությունները նշում է Տանձատափ գյուղի անվան տակ, իսկ Սվարանցի եկեղեցու մասին ոչինչ չի հիշատակում: Այս գյուղը Տաթեւ, Տանձատափ, Տամալեսք, Մարդաշ, Տանձիվեր եւ այլ գյուղերի հետ Տաթեւի վանքին մոտիկ գտնվող եւ վանքին պատկանած բնակատեղիներից է:

Ըստ ավանդության՝ Սվարանց գյուղի բնակիչները, խաբվելով 14-րդ դարում Հայաստան ներխուժած թաթար ջարդարար Լենկ-Թեմուրից, անձնատուր են լինում: Վերջինս գյուղացիներին կենդանի-կենդանի թաղել է տալիս եւ գրավում գյուղը: Իմանալով այդ ոճիրի մասին՝ գյուղի քահանան ծխամատյանում ջնջում է բնակավայրի հին անունը եւ գրում. «Սեւ արանց շէն», որից էլ հնչյունափոխմամբ առաջանում է «Սեւարանց» կամ «Սվարանց» անունը[6]:

Սվարանց գյուղի մեր կողմից վերը հիշատակված եկեղեցին բնակիչներն անվանում են երկու անունով՝ «Հազարափրկիչ» եւ «Սուրբ Գեւորգ»[7]: Փորձենք ստուգաբանել անվանում-

---

1 Ներկայումս եկեղեցում կատարվում են վերականգնողական աշխատանքներ (ճարտարապետ՝ Ստ. Նալբանդյան):

2 **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Հատոր առաջին, Թիֆլիս, 1910, էջ 543:

3 **Ղ. Ալիշան,** Սիսական, Վենետիկ, 1893, էջ 101, 209, 245:

4 Անդ, էջ 245:

5 «Դիվան հայ վիմագրության», պր. 2, կազմ. Ս. Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 40:

6 **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ 171:

7 Այս երկրորդ անունը ավելի հազվադեպ է գործածվում:

ները: Ժողովրդական ավանդությունը պատմում է, որ թշնամիների ասպատակություններից մեկի ժամանակ հազար գյուղացիներ մտել են եկեղեցի եւ փրկվել: Այդ օրվանից եկեղեցին սկսել են անվանել «Հազարափրկիչ»[8]: Այս անվանումն առ այսօր շատ սիրելի ու սրտամոտ է տեղացիների համար: «Սբ. Գեւորգ» անունը հավանաբար առաջ է եկել եկեղեցու շքամուտքի անմիջապես կողքին եկեղեցու հովիվ տեր Գեւորգի կողմից փորագրված վիմագրից. «ՌՃԾԴ /1705/ թվին տէր Գէորք յիշեցէքն ի Քրիստոս»: Բնակիչները հավանաբար շփոթել են եւ վիմագրում հիշատակվող «Գէորք» անձնանունը ընկալել որպես եկեղեցու անուն:

Փորձենք ճշտել եկեղեցու անունը: Պահպանվել եւ ներկայումս Հայաստանի ազգային արխիվում են գտնվում Սվարանց գյուղի եկեղեցու ծխական կամ չափաբերական մատյանները, որոնք ընդգրկում են 1860-1925 թթ.: Վերջինների մեջ ավանդվել եւ մեզ է փոխանցվել եկեղեցու անունը՝ Ս. Գրիգոր, ինչը զարմանալիորեն դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Որպես ապացույց՝ ներկայացնենք մատյաններից մի քանիսի գրությունները. «Չափաբերական տումար: Տուեալ ի Հոգեւոր կառավարութենէ Հայոց Տաթեւու Սբ. Գրիգոր եկեղեցւոյ, Սեւարանց գեղջ, յաղագս գրելոյ ի սմին զծնեալս, զպսակեալս եւ զննջեցեալս 1860 ամի»[9], կամ «Չափաբերական տումար: Տուեալ ի Հոգեւոր կառավարութենէ Հայոց Տաթեւու Սբ. Գրիգոր եկեղեցւոյ, Սուարանց գեղջ, յաղագս գրելոյ ի սմին զծնեալս, զպսակեալս եւ զննջեցեալս 1863 ամի»[10]: Մատնանշենք նաեւ, որ գյուղի անունը գրված է թե՛ «Սուարանց» եւ թե՛ «Սեւարանց» ձեւով:

1911 թ. պատրաստված մի արխիվային փաստաթղթում, որը վերաբերում է Տաթեւի հոգեւոր իշխանության կողմից Հայրապետ Մանուցյանին Սվարանցում քահանա նշանակելուն, եկեղեցին հիշատակվում է «Ս. Լուսաւորիչ» անունով. «Հոգեւոր կառավարութեանս Ատենում լսեցին զեկուցումն. Խեւարանց գիւղի հասարակութիւնը իր տարւոյս փետրուարի 1-ի խնդրագրով ներկայացնելով նոյն թիւ կազմած համախօսականը եւ ընծայացու Հայրապետ Համբարձումեան Մանուցեանի ծագման եւ զինուորական ծառայութեան թթ. 80 /60/ եւ 18 վկայագրերը՝ խնդրեց ձեռնադրել տալ յիշեալ ընծայացուին նոյն գիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցու քահանայ՝ ժողովրդեան հովուութեան համար ...»[11]:

Այսպիսով պահպանված արխիվային վավերագրերը հնարավորություն են ընձեռում ճշտելու **Սյունիքի Սվարանց գյուղի Հազարափրկիչ եկեղեցու անունը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ**:

---

8 «Հազարափրկիչ» անունը հանդիպում ենք մի քանի սրբատեղիների առնչությամբ եւս՝ եկեղեցիներ, խաչքարեր, մատուռներ, օրինակ՝ Գորիսի շրջանի Քաջարան գյուղի մատուռը: Ամենայն հավանականությամբ, սրանք սրբատեղիների օծման անունները չեն:

9 ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 362, թ. 1:

10 ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 362, թ. 13:

11 ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 843, թ. 1: 1912թ. հունվարի 22-ին վերոնշյալ Հայրապետ Մանուցյանը ձեռնադրվել է քահանա՝ տեր Հովհաննես անունով (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 843, թ. 12):